նպատակն էր միայն պարզել, թէ ինչպէս բազմաչխատ վաստակաւորի կեանքի վերջին տասնամեակը կլանուած էր այս պրոպագանդայի դէմ մաքառելով և նորա աշխատութիւններն էլ կապուած այս երեւոյթի հետ։ Զլինէր Նչեցին իւր դպրոցով, շատ աւելի մեծ չափով վտանգուած կը լինէր Հայոց եկեղեցու անկախութեան խնդիրը. Նչեցու գործը շարունակեց նորա աշակերտը՝ Յոհան Որոտնեցին, Տաթեւի դպրոցի մեծ հիմնադիրը Օրբէլեանների իշխանութեան մէջ, Գրիգոր Տաթեւացու հետ։

Նչեցու գործունէութեան երրորդ կողմը նորա գիտական–գրական աշխատութիւնն էր, հիմնուած ամբողջապէս նախնեաց ինքնուրոյն և թարգմանական մատենագրութեան վերայ. օտար աղբիւրներ չի գործադրում, թէև ծանօթ պիտի լինէր յունաց լեզուին։ Նա հաւաքող էր և ժրաջան հաւաքող. ինքնուրոյն ստեղծագործութեան և մտածողութեան մեծ կարողութիւն չի նկատւում նորա երկերի մէջ, բայց զարմանալի է աղբիւրներից օգտուելու ընդունակութիւնը. այլ և այլ աղբիւրներից առնուած կտորները այնպէս է կապում, միացնում իրար հետ, որ ամբողջական պատկեր է ստացւում. երեւի, նորա հմտութիւնն էլ այդ էր, որ ժամանակակիցների աչքում հեղինակաւոր գիտնականի հռչակ էր վայելում։ Նչեցու ամենամեծ գործը Եղեկիէլի մեկնութիւնն է, գրուած 1302 թուին Ստեփանոս Օրբէլեանի խնդիրքով, ինչպէս պարզւում է գրքի սկզբում և վերջում եղած Ընծայականից(*)։ Նախաբան Ընծայականի մէջ հեղինակն ակնարկում է նախ Օրբէլեանի մատենագրական աշխատութիւնների մասին. «Ի վերջին ժամանակիս այնքան գերազանցեալ ցուցար յիմաստս գիտութե., մինչ զի առաջնովքն ոչ չատացար ճոխանալ հանճարով, այլ և վերջնովքս հանդիսանաս պայծառանալ երկովք, որով և զմեզ գրաւեցեր հաւատով և սիրով»։ Առաջին երկերը Օրբէլեանի պատմութիւնն է և Ողբը ի Կաթուղիկէն, իսկ վերջինը Հակաճառութիւնը։ Հեղինակն անճողոպրելի է համարում իրեն եղած առաջարկութիւնից. «Վս. զի դու կրկին բարգաւաճիս ճոխութբ., ընդ հոգեւորին զմարմնականն ունիս լծակցեալ, որով և զմեզ ոչ միայն սիրով գրաւեցեր, զոր ունիս առ մեզ անբաղդատելի, այլ և իշխանական հրամանաւդ հնազանդեցուցեր»։ Հեղինակը մոռանալով իւր տկարութիւնը սկսում է աստուածաբան Եղեկիէլ մարգարէի մեկնութիւնը, ոչ թէ նուրբ «եւ ընդ անկուռ ճանապարհս գնալով» կամ նոր ջրհորներ փորելով, այլ սուրբ հայրերի հետեւողութեամբ նրանց խցուած եւ ծածկուած դանձերը բանալով, «է զի եւ զտարածեալ եւ զայլուր գտեալս բանս նոցա հաւաքեալ ի մի». Նա լրացնում է միայն «ի մերոց ներածուեց.» ինչ որ նրանց կողմից անուշադիր է թողնուած։ Վերջաբանի մէջ յայտնում է, որ նա գրել է «ի թուիս հայկազեան տոհմիս տովմարի ըս. հոլովման ամաց եօթն հարիւր յիսուն և երկուց, ի դառն և անբարի ժմկիս., որ տատանեալ ծփիմք ամենաներհակ արկածիւք ի ներքուստ և արտաքուստ»։ Այստեղ Նչեցին յիշատակել է խնդրում «նաև զաշխատասէր և զառատամիտ վարդապետն Յովհաննէս, զծնեալ որդեակն ի Քս., ի ձեռն որոյ սրբագրութի. տառիս եղեւ»։ Յետին գրիչների կողմից այս յիշատակութիւնը վերագրուել է Որոտնեցուն, ինչպէս № 797, 354բ. (այս մասը նորոգուած), բայց այդ սխալ է, 1303 թ., երբ գրուեց այս վերջաբանութիւնը, Որոտնեցին առ առաւելն նորածին մանուկ կարող էր լինել։ Այս Յովհաննէս վարդապետը կամ Արճիշեցին է, որ այդ ժամանակ Գլաձորումն էր, ինչպէս տեսանք, կամ մի ուրիշ նոյնանուն գիտնական(*), գուցէ եւ Հերմոնի վանքինը, որ ըստ Ալիշանի ընդօրինակել է «զգիրս ինչ Նիւսացւոյն առ ոտս մեծ վարդապետին Եսայեայ, առաջնորդի հռչակաւորն Գայլեձորոյ»(**)։

Գրքի վերջում Եսային գրել է իւր երկրորդ Ընծայականը, ուղղուած դարձեալ Ստեփանոս Օրբէլեանին, ուր յայտնում է, թէ իւր գործը վերջացրել է և նուիրում է «զդա փոխարէն անվճար քո երախտեացն, որ առ իս». Նա յոյս ունի, թէ «ի ձեռն նուազ կայծականցս զմեծագոյ հրդեհն ի ձեզ վառեցից եւ կատարել. իմաստս ի կտրելոցդ. առ մեզ փայլեսցէ»։ Օրբէլեանը պատասխանում է այս Ընծայականին մի ճոռոմ և ուռուցիկ չնորհակալութեամբ. նա Նչեցուն անուանում է «յսական. համալսարանացն պետ և ձիր իմաստից, պուէտ պարուպօդիմոն (կարդալ՝ պարուպօդեմոն, աղաւաղած περι παντικος = պերի պատ(ետ)իկոն. Ն. Ա.) ճեմարանին ճեմեալ, ճոխապետ առ բոցեղէն ասպարիզաւն, ուր յաճախեն ի գիտութի. եւ հեղմունք իմաստուե., ո՛վ դպրապետ անճառ դպրոցացն և համակ գիւան անհասական խորոցն». ողջունի հետ յայտնում է, թէ հասել է իրեն «թուղթ ձեր բերկրալից ցնծուբ., հանդերձ երկնառաք պարգեւօք», որով կատարուած է իւր չատ տարիներից ի վեր ունեցած խղձը, որի փոխարէնը երկրաւոր գոյքով վճարել կարող չէ։ Ապա յայտնում է, որ այդ

(*) Ձեռ. Էջմ. № 1265/1275ի մէջ հետեւեալ վերնագիրն ունի. «Ի խնդրոյ տն. Ստեփանոսի Սիւնեաց Նահանգին վերադիտողի արարեալ հաւաքումն մեկնուե. ած.արան մարգարէութեան. Եղեկիէլի երջանիկ վարդապետին Եսայեա Հայկազան տոհմի»։ Տարբեր է վերնագիրը № 1266/1276ի մէջ. «Գիրք մեկնուեն. Եղեկիէլի մարգարէին արարեալ մեծի վրդ.պին Եսայեայ, որ էր ի Նիճ գաւառէն և էր վրժպտ. մեծի Յոհաննու Որոտնեցւոյն ի թուին ՉԺ և Բ»։ Հասկանալի է, որ այս երկրորդ վերնագիրը նոյնութեամբ հեղինակինը չէ, այլ ուշ ժամանակի։

(*) Ձեռ. Էջմ. № 1265/1275 վերջաբանութիւնը համառօտ է և տարբեր թուականով. «Ի թվ. հայոց ՉՀԱ (= 1322) յունիսի ի մէկն». մեզ թւում է, թէ այդ փոփոխութիւնը կատարուած է Ասիլ դպիր գրչի ձեռքով, որ վերոյիշեալ Յովհաննէսին «վարդապետ մեր» է անուանում։

(**) Սիսական, 125։